# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 4*** ***«07» մայիս 2020 թ.***

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրով գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:
3. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի չօգտագործվող խողովակաշարից ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
4. Ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
5. Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 84 որոշման բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 4* *«07» մայիս 2020 թ.*

### *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43*

### ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 2020 թվականի ապրիլի 15-ի N 01 /18.1/2572-2020 գրությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում իրականացվելիք «Համայնքային տարածքների վերանորոգում կամ բարելավում» /համայնքապետարանի դահլիճ/ ծրագրով գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 4* *«07» մայիս 2020 թ.*

*ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի չօգտագործվող խողովակաշարից 160 մետր երկարությամբ 159 մմ տրամագծով երկաթյա խողովակը ապամոնտաժել: Ապամոնտաժված խողովակից 7 մետրը օգտագործել Գլաձոր բնակավայրի <<Դզեր>> կոչվող հանդամասի ճանապարհների հատվող մասում՝ որպես ջրատար, իսկ 153 մետրը՝ Գլաձոր բանակավայրի թիվ 17, թիվ 18, թիվ 19, թիվ 20 փողոցների ոռոգման ցանցի կառուցման համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 4* *«07» մայիս 2020 թ.*

### *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45-Ա*

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի պահանջը և Երկրապահ կամավորականների միության Եղեգնաձորի տարածքային բաժանմունքի նախագահի 2020 թվականի ապրիլի 26-ի N 74 գրությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից տրամադրել ֆինանսական օգնություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2020 թվականի մայիսի 7-ի թիվ 45-Ա որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել.

1. Գլաձոր համայնքի բնակիչներ՝
   1) Գլաձոր բնակավայրի բնակիչ Կարեն Խաչատրյանին՝ 40 000 /քառասուն հազար / ՀՀ դրամ,
   2) Գլաձոր բնակավայրի բնակիչ Վարդան Վարդանյանին՝ 40 000 /քառասուն հազար / ՀՀ դրամ,
   3) Արցախի ազատամարտի մասնակից՝ Գետափ բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Անդրանիկ Ռաֆիկի Սահակյանի ընտանիքի անդամ Սուսաննա Զաքարյանին՝ 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,
   4) Գետափ բնակավայրի բնակիչ Գևորգ Ավետյանին՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,
   5) Գլաձոր բնակավայրի բնակիչ Սիրուշ Մարգարյանին՝ ծննդյան 115 ամյակի առթիվ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Երկրապահ կամավորականների միության Եղեգնաձորի տարածքային բաժանմունքին՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

**Ընդամենը - 260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 4* *«07» մայիս 2020 թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով «Հայաստանի Համայնքների Միություն» ԻԱՄ-ի նախագահի 2020 թվականի ապրիլի 22-ի ԵՆ-0422/0424 գրությունը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 15-ի՝ « «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միությանը Գլաձոր համայնքի անդամակցությանը համաձայնություն տալու մասին» թիվ 84 որոշման 2-րդ կետում «բնակչության մեկ շնչի հաշվով 10 դրամ» բառերը փոխարինել «100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ» բառերով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 4*** *«07» մայիս 2020 թ.*

### *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ն*

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝
   08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ շինարարություն/ հոդվածից 1000.0 /մեկ միլիոն / ՀՀ դրամ:

2. Ավելացնել գործառնական դասակարգման՝
   08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր / հոդվածին 1000.0 /մեկ միլիոն / ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**